

Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդն ու Գանատայի Հայ Դատի լանձնախումբը հանդիպեցան դեսպանորդ Սթեֆան Տիոնի հետ



Յուլիս 22-ին, Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան, Գանատայի Հայ Դատի լանձնախումբի (ԳՀԴՅ) ներկայացուցիչ Մհեր Գարագաշեան, ԳՀԴՅ-ի համանախագահներ Շահէն Միրաքեան եւ Հրակ Տարազեան եւ ԳՀԴՅ-ի Օթթաուայի գրասենեակի գործավար Սեւակ Պելեան հեռակապով հանդիպում ունեցան Հայաստանի մօտ Գանատայի նորանշանակ դեսպանորդ Սթեֆան Տիոնի եւ Գանատայի արտաքին գործոց նախարարութեան գերատեսչութեան ներկայացուցիչներուն հետ:

Հայ Դատի լանձնախումբի պատուիրակութիւնը ողջունեց Սթեֆան Տիոնի նշանակումը որպէս կարեւոր քայլ Հայաստանի մէջ Գանատայի հետագայ դիւանագիտական ներգրաւումը ծիրէն ներս՝ նշելով Երեւանի դիմագրաւած այժմեան խնդիրները եւ այն առանցքային դերը, որը Գանատան պետք է ունենայ Հայ ժողովուրդին օգնելու առկայ մարտահրաւէրները յաղթահարելու գործընթացին մէջ:

Հակառակ այն իրողութեան, որ դեսպանորդ Տիոնի առաքելութիւնը հիմնականօրէն ուղղուած է Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման, ԳՀԴՅ-ի պատուիրակութիւնը շեշտեց Հայաստանի անվտանգութեան տարբեր մարտահրաւէրներու լուծման առաջնահերթութիւնը, յատկապէս Հայաստանի հանդէպ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի վարչակարգերու թշնամական տրամադրութիւններու լոյսին տակ, որոնք այսօրուան դրութեամբ կը հանգիստանան ամենամեծ խոչընդոտները երկրի ներքին կայունութեան եւ լիակատար ժողովրդավարութեան հասնելու ճանապարհին: Ընդգծուեցաւ նաեւ, որ առանց Երեւանին օգնելու լուծել իր ազգային անվտանգութեան մարտահրաւէրները՝ գործնականօրէն անկարելի պիտի ըլլայ դրական փոփոխութիւններ իրականացնել Հայաստանի կառավարման գործընթացին ու կառավարման եղանակին մէջ:

Պատուիրակութիւնը ողջունեց Գանատայի լանձնառութիւնը ուղղուած Հայաստանի մէջ ժողովրդավարական գործընթացի դրական զարգացման, յատկապէս հաշուի առնելով ՀՀ իշխանութիւններու ինքնակալական ձգտումներու, քաղաքական ընդդիմութեան հետ վատառողջ յարաբերութիւններու եւ վերջին ընտրարշաւի ընթացքին բացասական հոետորաբանութեան առկայութիւնը, միաժամանակ, ԳՀԴՅ-ի պատուիրակութիւնը շեշտեց անկախ ու պաշտպանուած դատական համակարգ եւ քաղաքացիական ծառայութիւն ունենալու անհրաժեշտութիւնը:

Հանդիպման աւարտին, ԳՀԴՅ-ի ներկայացուցիչները պարոն Տիոնին ներկայացուցին առաջարկներու նախնական ցուցակ եւ պայմանաւորուեցան շարունակել կառուցողական համագործակցութիւնը:

Հ.Յ.Դ Երիտասարդականը կը մեկնարկէ «Դէպի Սիւնիք» ծրագիրը



Արցախեան վերջին պատերազմէն ետք Ազրպէյճանը կը շարունակէ սպառնալիքներ հնչեցնել եւ պահանջներ ներկայացնել Երեւանի, Սեւանայ լիճի եւ յատկապէս Սիւնիքի գծով:

Առանց Սիւնիքի, առանց աշխարհագրական Հայաստանի այս ողնաշարին մեր պետականութիւնը ամբողջական փլուզումի ենթակայ է:

Սիւնիքի հայութեան դիմադրողական ոգիի հզօրացումը, փանթուրանական ծրագիրները ձախողեցնելը եւ Հայաստանի իշխանութիւններու պարտաւորական քաղաքականութեան դէմ պայքարը ամբողջ Հայ երիտասարդութեան, բայց ի մասնաւորի Սիւնիքի հայ երիտասարդութեան, պարտականութիւնն է:

Մեր ազգային գոյամարտի այս հանգրուանին, աշխարհասփիւռ Հ.Յ.Դ. երիտասարդական եւ ուսանողական միութիւնները զօրաշարժի կ'ենթարկեն իրենց բոլոր ուժերը, կը մտնեն պայքարի դաշտ ու կը մեկնարկեն «Դէպի Սիւնիք» ծրագիրը, որ կը նախատեսէ.

— Ներքաղաքական եւ միջազգային երիտասարդական հարթակներու վրայ քաղաքական, արտաքին յարաբերական եւ քարոզչական աշխատանքի ծաւալում:

— Ամրապնդելու համար ազգային ոգին, պատանեկան ճամբարներու կազմակերպում:

— Սիւնիքի երիտասարդութեան խնդիրներու լուծման նուիրուած ուսումնասիրութիւններու պատրաստութիւն եւ խորհրդածողովի կազմակերպում:

— Սիւնիքի մէջ երիտասարդական կեդրոններու ստեղծում:

— Երիտասարդութեան մասնագիտական կարողութիւններու եւ հմտութիւններու զարգացման միտող «Վերելք Ծրագիր»ի իրագործում:

— Սփիւռքի երիտասարդներու յատուկ գործուղումներ:

Կոչ կ'ուղղենք յանձնառու երիտասարդութեան մասնակից դառնալու մեր աշխատանքներուն եւ իր ուժերը ուղղելու «Դէպի Սիւնիք»:

ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ
Երեւան, 22 Յուլիս, 2021



BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

— All-New —
CIVIC
— SEDAN —

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՅԴ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակի յայտարարութիւնը

ՀՅԴ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակը դատապարտում է որոշ օտարերկրեայ դեսպանների եւ դիւանագէտների այցը Ադրբեջանի կողմից օկուպացուած Շուշի:

Ադրբեջանի կառավարութեան կողմից կազմակերպուած քարոզչական այցելութեանը միանալու դիւանագէտների ցաւալի որոշումը ընդամէնը մի քանի ամիս առաջ Շուշիի եւ ընդհանրապէս, Արցախի բնիկ հայ բնակչութեան նկատմամբ նոյն աւտորիտար եւ յանցաւոր ադրբեջանական ռեժիմի կողմից իրականացուած ռազմական յանցագործութիւնների հաստատման ու օրինականացման դատապարտելի գործողութիւն է:

44–օրեայ պատերազմի ընթացքում Թուրքիայի զանգուածային աջակցութեամբ եւ սիրիացի վարձկան ահաբեկիչների տեղակայմամբ, Ադրբեջանի զինուած ուժերը միտումնաւոր ոչնչացնում էին Շուշիի քաղաքացիական ենթակառուցուածքները եւ երկու անգամ ռմբակոծեցին քաղաքի գլխաւոր տաճարը: Թուրք–ադրբեջանական տանդեմի կողմից սանձազերծուած աղէտալի պատերազմի արդիւնքում՝ Շուշի քաղաքի դարաւոր պատմութեան մէջ առաջին անգամ քաղաքում լիակատար էթնիկ գտում է իրականացուել եւ քաղաքը լիովին դատարկուել է հայ բնակչութիւնից: Պատերազմի աւարտից յետոյ Ադրբեջանի նախագահը հրապարակաւ եւ հպարտօրէն յայտարարեց, որ իրենք «չնեբրի պէս դուրս են չպրտել հայ բնակչութեանը»:

Անխօս, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ ԱՄՆ–ի դեսպանների այս ուղեւորութեանը չմիանալը յստակ ուղերձ է, որ Արցախեան հակամարտութիւնը դեռեւս լուծուած չէ: Իրականում, ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք հիմնական սկզբունքներից երկուսը՝ ուժի չկիրառումը եւ ժողովուրդների ինքնորոշման եւ հաւասարութեան իրաւունքը, Ադրբեջանի իշխանութիւնների կողմից պատերազմի ընթացքում բացայայտօրէն խախտուել են:

Ցաւալի է, որ Շուշի այցելած դիւանագէտները չնախընտրեցին հետեւել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների օրինակին: Ընդունելով հրաւէրը՝ նրանք դարձան Ադրբեջանի աւտորիտար ռեժիմի քարոզչական արշաւի մաս: Աւելին, դրանով նրանք հարուած հասցրին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան ջանքերին՝ Արցախի հակամարտութեան տեւական, խաղաղ եւ արդար լուծում որոնելու ուղղութեամբ: Բացի այդ, այդ դիւանագէտները լիովին անտեսել են այն փաստը, որ Ադրբեջանը շարունակում է ապօրինի պահել եւ խոչտանդել աւելի քան 200 հայ ռազմագերու՝ օգտագործելով նրանց որպէս քաղաքական առեւտրի գործիք, ինչը խախտում է 2020 թ. նոյեմբերի հրադադարի եռակողմ յայտարարութիւնը: Այն ստորագրուած է Ադրբեջանի նախագահի կողմից եւ նախատեսում է բոլոր գերինների եւ ռազմագերիների վերադարձ:

Աւելին, Ադրբեջանը շարունակում է հրաժարուել միջազգային կազմակերպութիւնների, օրինակ ԵՈՒՆԵՍԿՕ–ի, մուտքի թոյլտուութիւն տրամադրել Արցախի հայկական ճարտարապետական եւ կրօնական յուշարձաններ: Վերջին ամիսներին ի յայտ են եկել այդ կրօնական յուշարձանների պղծման եւ նոյնիսկ ամբողջական ոչնչացման փաստեր: Բացի այդ, 2021 թվականի մայիսից ի վեր ադրբեջանական բանակը ոտնձգութիւն է իրականացրել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքի նկատմամբ՝ Սիւնիքի եւ Գեղարքունիքի մարզերում եւ առեւանդել հայ զինծառայողների :

Շատ ցաւալի է տեսնել, թէ ինչպէս է դիւանագիտութիւնը, մասնաւորապէս այն երկրներում, որոնք շեշտում են, թէ կարեւորում են մարդու իրաւունքները եւ էթիկան, վերածուծ աւտորիտար մի երկրի դուգուկի տակ պարելու տգեղ դրսեւորման: Մի երկրի, որը Եւրոպայում առաւել յայտնի է բարդ կոռուպցիոն մեխանիզմներ ստեղծելով, ինչպիսիք են «ադրբեջանական լուացքատունը» եւ բնիկ հայ բնակչութեան դէմ վարձու ահաբեկիչների միջոցով պատերազմ սանձագերծելը: Որպէս եւրոպական քաջաքցիական հասարակութեան կազմակերպութիւն, մենք կարծում ենք, որ դիւանագիտութիւնը աւելին է, քան սա, եւ որ դիւանագիտութեան հիմքում պէտք է լինեն արժանապատուութիւնն ու արդարութեան որոշակի զգացումը:

Մենք, անշուշտ, կը շարունակենք դրան ուղղուած մեր աշխատանքը:

ՀՅԴ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակ

Տխուր ճակատագիր է սպասում Ծուշիի Ղազանչեցոց եկեղեցուն. պատմաբան



2020թ. Արցախեան պատերազմի ողբերգական հետեւանքներից մէկն էլ այն է, որ, բացի տարածքային եւ մարդկային կորուստներից, ունեցանք պատմամշակութային արժէքների հսկայական կորուստ:

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող Արտակ Մաղալեանը Yerkir.am–ի հետ զրոյցում ցաւով արձանագրում է. «Տխուր ճակատագիր է սպասւում Շուշիի Ղազանչեցոց եկեղեցուն: Կը պահպանեն, բայց կը փորձեն դիմախեղել, ներկայացնել ոչ հայկական: Ցաւալի է, որ ԵՈՒՆԵՍԿՕ–ի նման կարեւոր կառոյցի արձագանքը չենք լսում: Թւում է, թէ պէտք է աղաղակ բարձրացնէին, բայց քար լուութիւն է տիրում: Ցաւօք, միջազգային հանրութիւնը ինչպէս բազմաթիւ այլ դէպքերում, հիմա էլ է լուում»:

Ըստ պատմաբանի՝ կորսուած պատմամշակութային յուշարձանների թւում կան համամարդկային նշանակութեան այնպիսի կարեւորագոյն յուշարձաններ, ինչպիսիք են՝ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, Տիգրանակերտը, որտեղ հնագիտութեան ինստիտուտի արշաւախումբը կարեւոր պեղումներ էր կատարում, կարեւորագոյն բացայայտումներ էր արել վերջին տասնամեակում, Լաչինի չրջանի Ծիծեռնավանքը, որը հայկական վաղ քրիստոնէական ժամանակաշրջանի չափազանց կարեւորագոյն յուշարձան է, չափազանց կարեւոր նշանակութիւն ունէր Արցախի Հադրութի շրջանի Տող գիւղի մելիքական ապարանքը:

«Դիզակի մելիք Եգանի մելիքական ապարանքը՝ վրայի արձանագրութեան մէջ մելիք Եգանը նշում է, որ Իրանի Նադիր շահի կողմից ստացել է Խամսայի մելիքութիւնների գահը: Ապարանքը թուագրւում է 1737թ.–ով եւ այդ արձանագրութեան մէջ չափազանց կարեւոր նախադասութիւն կարգ «Ես չթողեցի, որ Հայաստանից գերի տանեն»: Սա նաեւ պատմական վկայութիւն է այն բանի, որ Արցախը հայկական է: Դա վերաբերում էր օսմանեան ռազմակալման այն շրջանին, երբ օսմանեան զօրքերը Հայաստանում էին, եւ Դիզակի մելիք Եգանը այդ նախադասութեամբ փաստում էր, որ թոյլ չի տուել, որ Հայաստանից օսմանցիները գերի տանեն»,– ասում է պատմաբանը՝ շեշտելով՝ այսպիսի կարեւորագոյն յուշարձաններ մնացին թշնամու վերահսկողութեան տակ, եւ դրանց չափազանց ցաւալի եւ տխուր ապագայ է սպասւում:

Այս յուշարձաններից բացի, կան նաեւ գիւղական գերեզմաններ, ուխտավայրեր, խաչքարեր, աղբիւր–յուշարձաններ, կարեւոր են նաեւ Հայրենական մեծ պատերազմի զոհերին նուիրուած յուշարձանները, որոնք ադրբեջանցի զինուորները ոչնչացնում են: Ըստ պատմաբանի՝ ադրբեջանցիները մեծ յուշարձանները, օրինակ՝ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին, ցուցադրաբար կը պահպանեն, սակայն կը փորձեն խեղել դրանց ինքնութիւնը:

«Վերջերս տեսանք, թէ ադրբեջանցի մահմեդականների հոգեւոր առաջնորդն ինչպէս էր Ղազանչեցոց այցի ժամանակ ասում, որ եկեղեցին ռուսական ծագում ունի»,–նշում է պատմաբանը:

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	LEXUS LEXUS GABRIEL ST-LAURENT Sevag Jakmakjian New Car Sales Manager 3303, ch. de la Côte-de-Liesse St-Laurent, QC H4N 3C2 Tel.: 514 747-7777, Ext.: 3933 Fax: 514 747-7447 www.lexusgabrielstlaurent.com
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	MAHROUSÉ Pâtisserie FONDÉE EN 1970 9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2 Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca	JACOB & JACOB CARROSSERIE BODY SHOP CAS D'ASSURANCES 6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6 Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487 jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun. au vend. : 8h30 à 21h Sam. et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE membre affilié à Proxim

Հիմա պէտք է կարողանանք պահպանել մեր պետականությունը, բանակը, ազգային գաղափարախօսությունը. Նայիրի Հոխիկեան

Լրագրող Նայիրի Հոխիկեանը վստահ է՝ գործող իշխանութեան՝ «Ապագայ կայ, կա՛յ ապագայ» կար–գախօսը կոնկրետ քարոզչական տեխնոլոգիայ էգ օգ–տագործոււմ է 25–րդ կադրի էֆեկտը մարդկանց հիպ–նոսի ենթարկելու համար։

«Հորիզոն»–ի թղթակցի հետ գրոյցում Նայիրի Հոխիկեանը յիշեցրեց՝ կան որոշակի արտայայտութիւն–ներ, ձեւակերպումներ, որոնք որոշակի ձայնային ելե–ւէջներով կրկնելու դէպքում դրանք լսող որոշ մարդիկ սկսում են անջատել գիտակցական մտածողութիւնն ու դառնում են հիփնոսացած։

«Նիկոլ Փաշինեանն էլ չէր հաւատում իր ասած «Ապագայ կայ» կարգախօսին։ Յետագայում մենք կը շարունակենք տեսնել, որ ոչ թէ ապագայ կայ կամ չկայ, այլ կը հասկանանք, որ այն ուղղակի ձեւական եզրոյթ էր։ Չմոռանանք, որ այդ արտայայտութիւնն առաջին անգամ Թուրքիայում մի կուսակցութիւն էր կիրառել, երբ ասում էին՝ «Burada Gelecek Var, Var Burada Gelecek», որը բառացի նշանակում էպ «Այս–տեղ ապագայ կայ, կայ այստեղ ապագայ»։ Սրանք թուրքական տեխնոլոգիաներ են։ Նմանատիպ տեխնո–լոգիայ Թուրքիայում առաջին անգամ կիրառուեց 2017 թուականինգ խօսքը «քայլելու տեխնոլոգիայ»–ի մա–սին է, երբ Քեմալ Քըլըչդարօղլուն՝ քեմալիստական կուսակցութեան առաջնորդը, 2017–ի յունիս կամ յուլիս ամսին Անկարայից քայլելով գնաց, հասաւ Ստամբուլ եւ իր ետեւից մօտ 2 մլն մարդ տարաւ։ Նա կարող էր յեղափոխութիւն անել, բայց էրզողանը ԱՄՆ–ի հետ որոշակի բանակցութեան ու գիջումների գնաց, որից յե–տոյ «ստամբուլեան մարշ» կոչուած տեխնոլոգիան կանգ առաւ։ Նոյն բանը եղաւ Հայաստանում՝ 2018 թուականին։ Բազմաթիւ հարցերում մենք տեսնում ենք՝ Հայաստանի այսօրուայ իշխանութիւնը կիրառում է թուրքական փորձարկուած, յաջողուած տեխնոլոգիա–ներ», նշեց Նայիրի Հոխիկեանը։

Նա յիշեցրեց՝ այս օրերին բաւական լարուած է հայ–ադրեեջանական սահմանի՝ Երասխի հատուածում, Սեւ լճի մօտ երկու հայ գինուոր է անհետ կորել, Արցա–խում՝ Շուշիում ադրեեջանցիները կրակ են արձակում, եւ սա դեռ ամէնը չէ։ Ադրեեջանցիներն արգելում են, որ հայերն ուխտագնացութիւն ունենան, հայ հոգեւո–րականներին արգելում են հոգեւոր ծառայութիւն իրա–կանացնել։

«Վաղն էլ կը տեսնենք, որ ադրեեջանցիները Կարմիր Շուկայի մօտ նոր սադրանքների կը դիմեն, միւս օրը՝ Գեղարքունիքի մարզի սահմանային հատ–ուածում կամ Տաւուշում զօրքերի կուտակում կարող է լինելզ սա սպասելի է։ Ադրեեջանն ու Թուրքիան այն

պետութիւններն են, որոնք աշխատում են յստակ մար–տավարութեամբ, եւ այն, ինչ այսօր տեսնում ենք, ադրեեջանական պլանաւորման մաս են կազմում», նշեց Նայիրի Հոխիկեանը։

Ըստ նրա՝ հայրենիքում ստեղծուած այս ծանրա–գոյն իրավիճակից դուր գալու հիմնական կոռւանը պի–տի լինի ազգային գաղափարախօսութիւնը։

«Ազգային գաղափարախօսութիւնը երկարամեայ պլանաւորում է, ռազմավարական պլանաւորում։ այն մէկ– երկու կամ երեք տարուայ պլանաւորաման գործ չէ։ Մենք ունենք տաղանդաւոր երիտասարդներ, կեն–սափորձ ունեցող հայրենակիցներ, բայց այս պահին մարտավարութիւնն ու ռազմավարութիւնը չպիտի շփոթենք։ Այսօր մարտավարութիւնը հայոց պետակա–նութեան պահպանումն է, որն ազգային գաղափարա–խօսութեան առումով չի կարող ձգել, այսինքն՝ գարա–փարախօսութիւնը երկարաժամկէտ ռազմավարութիւն է, իսկ մարտավարութիւնը կարճաժամկէտ է», – նշեց Նայիրի Հոխիկեանը՝ շեշտելով՝ հիմա պէտք է կարողա–նանք պահպանել մեր պետականութիւնը, բանակը հզօրացնել, բայց այդ ընթացքում չպէտք է մոռանանք ազգային գաղափարախոխօսութեան մշակման ու տա–րածման մասին։

Աւելին՝ ըստ Նայիրի Հոխիկեանի՝ նոյնիսկ նրանք, որոնք սխալուել են եւ քուէարկել Նիկոլ Փա–շինեանի ու նրա խուճուայի օգտին, նոյնիսկ այդ մարդ–կանց շարքում մեծ թիւ են կազմում նրանք, որոնք ու–նեն ազգաին մտածողութիւն, ազգային արժէհամա–կարդ. նրանց հնարաւորութիւնները եւս պիտի օգտա–գործուեն։ Մեղիափորձագէտը շեշտեց՝ մենք քիչ ենք, չպիտի բաժան–բաժան լինենք, պիտի միասնական լի–նենք։

Ըստ Նայիրի Հոխիկեանի՝ բաժան–բաժան եղած ազգին մէկ բուռնցք դարձնելու ու ներազգային հա–մերաշխութեան հասնելու համար մենք ազգանուէր առաջնորդների կարիք ունենք։

«Օրինակ՝ այսօրուայ քաղաքական ընդդիմու–թեան որոշակի ուժեր սխալ քաղաքական կուրս են ընտրել. տեխնոլոգիաներն են սխալ կիրառում։ Օրինակ՝ Քոչարեանի մասին խօսենք. նրա դէմ աւելի քան 10 տարի հակաքաղոցութիւն իրականացուեց, ապառեղե–կատուութիւն մատուցուեց։ Չեմ ուզում Քոչարեանին գնահատել, բայց պէտք է փաստել՝ հակաքոչարեանա–կան քարոզչութիւն իրականացուեց, այդ թւում՝ «Հանրապետական» կուսակցութեան կողմից։ 2021 թուականին ընտրութիւններում Քոչարեանը կարողա–ցաւ աւելի քան 250 հազար քուէ հաւաքել, բայց այդ քուէների թիւը կարող էր աւելի մեծ լինել, եթէ, օրինակ,

Քոչարեանը նստեր տեսախցիկի առաջ եւ խօսեր հայերի հետ, բայց նա չարեց։ Մարդիկ 2021 թուականին այլեւս չեն ապրում 2005–2010 թուականների մտածողու–թեամբ, ժամանակները փոխուել են», նշեց Նայիրի Հո–խիկեանը։

«Ճիշտ քաղաքական տեխնոլոգիաներ կիրառելու դէպքում, միանշանակ, վստահ եղէ՛ք, հասարակութիւնը կը հասկանայ՝ ով է Նիկոլ Փաշինեանի խուճուան, եւ ովքեր են այն մարդիկ, որոնք կարող են գալ իշխանու–թեան ու երկիրը տանել ազգային ճանապարհով, ոչ թէ այսպէս կոչուած, քաղաքացիական», – ընդգծեց Նայի–րի Հոխիկեանը։

Զրոյցի վերջում լրագրող, մեղիափորձագէտը ընդգծեց՝ այն հայերը, որոնք ունեն ազգային մտծո–ղութիւն ու մօտ են արմատներին, ազգային պետու–թեան հիմքերում են, ազգային գաղափարախօսութիւնը պիտի սկսեն ներարկել մեր հայրենակիցների մէջ։

«Առաջիկայ 1–1,5 տարուայ ընթացքում ծանր, աշխատանք պիտի կատարենք։ Առաջիկայ 4–5 տար–ուայ ընթացքում հանգիստ չենք ունենալու։ Առաջի–կայ 1–1,5 տարուայ ընթացքում պիտի կայունացում բերենք մեր երկրում, իսկ յետոյ՝ պատրաստուենք պա–տերազմի։ Դա մեր ցանկութիւնը չէ, բայց Ադրեեջանն ամենաուշը 2024 թուականի հոկտեմբերին յարձակուե–լու է Արցախի ու Հայաստանի վրայ։ Զայլամի դիրք ընդունելը ու գլուխն աւազի մէջ մտցնե՞լն է ճիշտ, թէ՞ պատերազմին պատրաստուելը, որպէսզի երբ Ադրեեջա–նը յարձակի, կարողանանք ազատագրել Քարվաճառը, Քաշաթաղը, Հաղբուժը, Շուշին…

Մեզ պէտք է համախմբում, սփիւռքի մեր հայրե–նակիցները պիտի շարունակեն նուիրուածութիւնը հայ–րենիքին եւ կապ չունի, որ այսօր ինչ–որ Նիկոլ Փա–շինեան է Հայաստանի ղեկին։ 90–ականներին էլ ինչ–որ Լեւոն Տէր–Պետրոսեան էր Հայաստանի ղեկինգ արդեօ՞ք մեր սփիւռքահայ հայրենակիցները դադարե–ցին սիրել մեր հայրենիքըզ իհարկէ, ոչ։

Առաջիկայում, երբ որոշակի յաջողութիւններ ար–ձանագրենք, սփիւռքը պիտի յստակ ներկայութիւն ու–նենայ Հայաստանի խորհրդարանում։ Եթէ՛ մենք սփիւռ–քից օգնութիւն ենք ուզում, ուրեմն՝ սփիւռքի մասնակ–ցու թիւները պիտի ունենանք երկրի կառավարման գոր–ծումզ դա է ազգային համախմբումը, ազգային գաղա–փարախօսութիւնը, համաշխարհային հայկական կառա–վարումը», եզրափակեց Նայիրի Հոխիկեանը՝ շեշտելով՝ վստահ է՝ յաջողութիւններ ունենանք, պարզապէս հարկ է միաւորուել, ունենալ տեսլական ու այդ տեսլականի ճանապարհով առաջ ընթանալ։

 Յաամիկ Բալէեան

Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինը Կ’օժանդակէ 1951 Բնակարաններու Նորոգութեան Աշխատանքին

4 օգոստոսի Պէյրութի նաւահանգիստի աղէտալի պայթումէն քանի մը օր ետք, ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհա–փառ հայրապետին օրհնութեամբ, նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Տ. Շահէ արք. Փա–նոսեանին, կեանքի կոչուեցաւ Լիբանանահայութեան վերականգնումի մարմինը, որուն մաս կազմեցին լիբա–նանահայ երեք համայնքներու, երեք քաղաքական կու–սակցութիւններու եւ երեք բարեսիրական միութիւննե–րու ներկայացուցիչները։

Վերականգնումի մարմինը անմիջապէս անցաւ ծրագրաւորման աշխատանքին, գնահատեց Պէյրութի եւ Մեթնի չրջաններուն մէջ ապրող հայ ընտանիքներուն կրած բնակարանային վնասները եւ աշխատանքային բաժանումներով անցաւ օժանդակութեան գործնակա–նացման փուլին։

Յայտնենք, որ ընդառաջելով վեհափառ հայրա–պետի կոչին, ամբողջ հայաշխարհը եկաւ իր զօրակցու–թիւնը ընծայելու լիբանանահայութեան, որ արդէն իսկ կը գտնուէր ընկերային–տնտեսական եւ առողջապա–հական ծանր ու ճգնաժամային պայմաններու մէջ։ Հա–մահայկական հանգամանքեան մասնակից դարձան սփիւռքեան մեծ թիւով համայնքներ, ինչպէս նաեւ լի–բանանահայութեան օժանդակութեան գործին ձեռք եր–կարեցին Հայաստան Համահայկական Հիմնադրամն ու Արցախի պետութիւնը։

Իր կարգին, Լիբանանահայութեան վերականգ–նումի մարմինը անմիջապէս դիմեց լիբանանահայու–թեան, որպէսզի ճշդուած կեդրոնները ներկայանալով, մեր հայրենակիցները ամբողջացնեն իրենց կրած վնաս–ներուն ցանկագրումը։ Դիմումնագիրներու ամբողջաց–ման լոյսին տակ, առաջին երկու փուլերով, ճարտարա–պետներէ բաղկացեալ յանձնախումբ մը քննարկեց ներ–կայացուած բոլոր դիմումնագիրներն ու կատարեց անհ–

րաժեշտ արժեւորումներ։ Ուստի, կատարուած արժեւո–րումներուն հիման վրայ, 1496 ընտանիքներ, սեպտեմ–բեր 2020–ին, ստացան նիւթական համապատասխան հատուցումներ։ Զուգահեռաբար, վերանորոգութեան աշխատանքներ սկսան նաեւ պայթումին պատճառով ծանր վնասներու ենթարկուած եկեղեցիներուն մէջ։

Կարեւորութեամբ կը յիշենք, որ պայթումին պատճառով նահատակուած 14 հայորդիներու ընտա–նիքները Լիբանանահայութեան վերականգնումի մար–մինին ճամբով ստացան անհրաժեշտ նիւթական հա–տուցումներ։

7 դեկտեմբերին Լիբանանահայութեան վերա–կանգնումի մարմինը յատուկ հաղորդագրութեամբ մը դարձեալ դիմեց լիբանանահայութեան՝ վնասներու ցանկագրումի երրորդ առիթ մը շնորհելով բոլոր անոնց, որոնք առաջին երկու առիթներուն իրենց դիմումնա–գիրները չէին կրցած ներկայացնել։ Թէեւ արձանագ–րութիւնները ամբողջացան 10 դեկտեմբերին, սակայն Քորոնա ժահրի աննախադէպ մազլցումը եւ այդ ծիրին մէջ մեր կառոյցներու աշխատակազմերուն ունեցած վարակման բարձր համեմատութիւնները, Լիբանանի տարածքին հաստատուած չրջացյութեան արգելքնե–րը, ինչպէս նաեւ Լիբանանահայութեան վերականգ–նումի մարմնի անձնակազմին ունեցած կորուստները պատճառ դարձան, որ երրորդ փուլի հատուցման ժամ–կէտը քանի մը առիթներով յետաձգուի։

Այսօր գոհունակութեամբ կը տեղեկացնենք, որ հինգշաբթի եւ ուրբաթ՝ 22 եւ 23 յուլիսին, հատուցման աշխատանքը կը հասնի իր աւարտին։ Այս առիթով, վնասներու թղթածրարները գնահատող յանձնախումբի ճշդած սկզբունքներուն համաձայն, 455 ընտանիքներ եւս պիտի ստանան անհրաժեշտ նիւթական օժանդա–կութիւն։ Հատուցումները պիտի կատարուին դարձեալ

լիբանանեան դրամանիշով, սակայն նկատի ունենալով լիբանանեան թղթոսկիի արժեզրկումի պարագան։

Այս փուլի ամբողջացումէն ետք, Լիբանանահա–յութեան վերականգնումի մարմինը աւարտած կը նկա–տէ վնասուած բնակարաններու օժանդակութեան գոր–ծը՝ անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով այս աշխատանքին մէջ իրենց գործնական, բարոյական եւ նիւթական աջակցութիւնը տրամադրած բոլոր հայոր–դիներուն՝ շեշտելով, որ բաղդատելով լիբանանեան այլ համայնքներու կողմէ կատարուած օժանդակութեանց եւ վերականգնումի աշխատանքներուն հետ, իր բովան–դակութեամբ եւ տարողութեամբ, լիբանանահայ մեր համայնքին կատարած այս նախաձեռնութիւնը մեծա–գոյնն է։

Ուրախ ենք, որ ընդառաջելով վեհափառ հայրա–պետի կոչին, մեր ժողովուրդը անգամ մը եւս եկաւ ար–ժանավայել գիտակցութեամբ եւ համազգային զօրակ–ցութեամբ գնահատելու լիբանանահայութեան հաւա–քական ու միացեալ կամքի արգասիքը հանգիսացող վերականգնումի յոյժ կարեւոր ծրագիրը եւ անոր տուաւ արժանի գնահատական։

Մեր մաղթանքն ու ակնկալութիւնն է, որ շուտով վերջ գտնէ Լիբանանը հարուածող ծանր քաղաքական, տնտեսական, առողջապահական ու ընկերային ճգնա–ժամը, որպէսզի մեր համայնքը կարենայ վերադառնալ աշխատանքային բնականոն պայմաններուն՝ յաւելեալ ուժականութեամբ վերստանձնելու համար իրեն վստահուած համահայկական եզակի դերակատարու–թիւնը։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Մոնթեալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահի նուիրարշաւ

Մարտի 15, 2021-ին Մոնթեալի Հայ Կեդրոնը նախաձեռնեց համայնքային մեր կեանքին հիմը հանդիսացող «Աւետիս Ահարոնեան» սրահի վերանորոգման, որուն համար նախատեսուած էր \$ 1,100,000 տոլար:

Այս հաստատութիւնը, որ 1973-էն ի վեր Մոնթրէալահայութեան հաւաքատեղին է, կարիքն ունի արդիականանալու՝ մեր համայնքի եւ մեր ընտանիքներու տարբեր կարիքները գոհացնելու համար: Վերանորոգման այս նախագիծը կ'ընդգրկէ. Աւետիս Ահարոնեան սրահի ամբողջական վերանորոգում, Հայ Կեդրոնի ճակատի արդիականացում, հանդերձարանի յաւելում, կեդրոնի մուտքին վարչական գրասենեակի կառուցում, եւ Համագային գրախանութի նոր տարածք:

«Ահարոնեան Սրահ»-ի նուիրարշաւի թիրախն է 500,000 տոլար որպէսզի մեզի առիթ ընծայէ իրականացնելու այս ամբողջ նախագիծը: Այս վեհ ծրագրին Ձեր մասնակցութիւնը կ'ընթերցեմք բերել իւրաքանչիւր քառակուսի ոտքի համար 250 տոլարի նուիրատուութեամբ:

Կը հրաւիրենք Ձեզ դիտելու Hay Horizon- ի կատարած հարցազրոյցները ընկերային ցանցերու վրայ՝ ծանօթանալու այս ծրագրի ընթացակարգերուն, շինարարական յանձնախումբի անդամներուն, նուիրարշաւի յանձնախումբի անդամներուն եւ յատկապէս մեր առաջին նուիրատուներուն, որոնք կարելի դարձուցին այս մեծ ծրագրին ձեռնարկումը. Տիկ. Շաքէ Կէօնճեանին եւ ընտանիքին, Տ. Եւ Տիկ. Արթօ եւ Ալիս Մարգարեանին եւ Տիար Պետրոս Արսլանեանի կտակին:

Այս ծրագիրը կը յառաջանայ ըստ նախատեսուած ժամանակացոյցին եւ կը սպասուի որ գործերը իրենց աւարտին հասնին 2021-ի աշնան, երբ պիտի կարենանք Ձեզ հիւրընկալել:

Համոզուած ենք, որ մեր համայնքի իւրաքանչիւր անդամ կը բաժնէ մեր ոգեւորութիւնը եւ կը մասնակցի այս նուիրարշաւին:

Լրացուցիչ տեղեկութիւններու համար

Նուիրատուութիւն՝ <http://sourphagop.net/en/donate-to-church/>

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցու Հոգաբարձութիւն



Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ TRIKTRAK.CA
---	---

ԿԸ ՓՆՏՈՒԻ Կը փնտռեցէք հայ գործաւոր մը, որ աշխատի Charcuterie Mourad Fromagerie Սպարավաճառի խանութն Ներս: Հասցէ՝ 4671 Blvd. Samson (coin 100e) Laval, Que H7W 2H5 Հտաքըրրուողներն կը խնդրուի հեռաձայնել Մուրատին՝ 450 233-2401 կամ 514 962-4429

www.horizonweekly.ca	CONNECT WITH US: facebook.com/pages/horizonweekly @horizonweekly horizonweekly YouTube – Horizon Weekly TV
-----------------------------	---

 Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676 ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ... ԼԱԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ *Նոր Հասցէ՝ Voyages Haig Travel 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2 PERMIS DE QUÉBEC Tel: + 1 514-284-7676 Email info@haigtravel.ca

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 ALEPPO KEBAB Rest. Chef Zak Cell: 416-701-9191 647-323-5950 1960 Lawrence Ave. E., Scarborough, ON M1R 2Z1 (Lawrence and Tower Dr) www.aleppoakebab.ca	 Crown Pastries Fine Middle Eastern Pastries Like us on crownpastriesbaklava.com Scarborough 2086 Lawrence Avenue East, Scarborough, ON M1R 2Z5 647-351-2015 Mississauga 5083 Dixie Road, Unit D3 Mississauga, ON L4W 0E6 905-602-2018
 ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com Each Office is Independently owned and Operated	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Անյետաձգելի՛ն. Լիբանանահայ գաղութը ծով կարիքներու առջեւ կը գտնուի

Լիբանանահայութիւնը բոլոր մակարդակներու վրայ բազմատեսակ եւ բարդ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուի։

Լիբանան օրէ օր, ժամ առ ժամ տնտեսական, ապահովական, ապրուստի, կենցաղային լուրջ եւ նորանոր մարտահրաւէրներու դէմ յանդիման կը կանգնի։

Անցնող տասնամեակներուն լիբանանահայութիւնը միշտ ալ իր անկարելին կարելի ըրած է եւ հասած է բոլորին անխտիր, տուած է միշտ՝ իր ունեցածէն եւ չունեցածէն անգամ։

Այսօր այս գաղութը շատ լուրջ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուի։ Գալիքը աննախատեսելի է, իսկ առօրեան՝ դժոխային։

Տնտեսական ընթացիկ տագնապ մը չէ, զոր կը դիմագրաւենք, այլ կը կիրարկուի ժողովուրդին արժանապատուութիւնը ոտնակոխելու, զայն ծուռկի բերելու, աղքատացնելու եւ անօթի ու վատաւողջ պահելու կազմակերպուած ծրագիր մը, որ մարդկային պատմութեան մէջ շատ քիչ երկիրներու մէջ պատահած է։

Բանակի զինուորը, ուսուցիչը, բժիշկը, համալսարանի դասախօսը, բանուորը, արհեստաւորը, ղեկավործը, վաճառականը, պաշտօնեան թէ գործատէրը բոլորն ալ սնանկացած են։ Մնանկանալու ճամբուն վրայ են։

Այս բոլորին դէմ յանդիման, մենք՝ իբրեւ լիբանանահայ գաղութ, ՄՈՒԿ կարիքներու առջեւ կը գտնուինք։ Արդարեւ, տագնապը համատարած է. հայ ծերունիէն մինչեւ հայ մանուկին դեղն ու կաթը, հայ ուսուցիչէն մինչեւ հայ բանուորին առօրեայ կենցաղային կարիքները, հայ երիտասարդէն մինչեւ հայ ուսանողին երազները շոգիւացած են ամբողջութեամբ։ Անտէր չեն, անտէր չի ալ մնար օնէէ մէկը։

Սակայն այսօրուան մեր մտահոգիչ պայմաններուն դարմանը հաւաքական ճիգն է։

Անյետաձգելին՝ միասնական ճիգով լուծումներ գտնելն է։

Այ ո՛չ ուսեստեղէնի տուփերը, ո՛չ առողջապահական ծրարները, ո՛չ զեղչերը, ո՛չ ալ բժշկական դասաւորումները սկսած են գոհացնել ժողովուրդը, որ իր կենցաղային հարցերը լուծելու անկարողութեան դիմաց կը կանգնի ամէն օր։

Մեր կարողութիւններէն վեր պահանջը կայ։ Մեր ըսելով կ’ակնարկենք գաղութային ներքին ուժերուն ու կառոյցներուն, որոնց կարողութիւնէն եւ կարելիութիւնէն շատ աւելի վեր ու հսկայ նախաձեռնութեան կարիք կայ այսօր։

Կարելի չէ միայն «Դժուար են լիբանանահայութեան պայմանները» ըսել ու անցնիլ եւ ձեռնածալ սպասել։ Իւրաքանչիւր սփիւռքահայ ընտանիք լիբանանահայ ընտանիք մը պահելու յանձնառութիւնը պէտք է ստանձնէ։ Այսօրուան մեր պայմաններով 6000 ընտանիքի մասին է խօսքը։ Ասոնց վրայ կ’աւելնան ազգային, կրթական, կրօնական, բարեսիրական, միութենական եւ կուսակցական կառոյցներուն պաշտօնեաները։ Սփիւռքի մեր քոյր-եղբայրներուն համար աննշան հանդիսացող դումար մը այսօր կրնայ կարեւոր ըլլալ լիբանանահայ ընտանիքի մը համար, որ իր ջուրն ու հացը ապահովելու տաղտուկով կ’ապրի յաճախ։

Լիբանանի մէջ նուազագոյն ամսականը, որ կը հասնէր 400–600 տոլարի, այսօրուան լիբանանեան դրամի գահալէժ արժեզրկումով, հասած է միայն 30 տոլարի։ Բայց եւ այնպէս ասոր դիմաց սղաճը աւելի քան տասնապատիկ եղած է, ու կը շարունակէ մագցումը։

Հաւաքական ճիգը, աննախընթաց նեցուկն ու երկարաշունչ նպաստը հրամայական են լիբանանահայ ընտանիքները ոտքի պահելու։

Անյետաձգելի եւ շտապ քայիւր պէտք է առնուին։ Բոլորը բոլորին հետ աշխատելու կամքը պէտք է գորանայ։ Սփիւռքի գաղութներն ալ, հակառակ անոր որ իւրաքանչիւրը իր հոգերով տարուած է, բայց եւ այնպէս պէտք է ուշադրութիւն դարձնեն լիբանանահայութեան, որ լինել չլինելու պայքար կը մղէ։

Կացութիւնը անտանելի դարձած է, իսկ նախաձեռնութիւն մը կատարելը անյետաձգելի է արդէն։

ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ

Կարմիր գիծերը քաշուած համարեցի՛նք

Ինչպէս միշտ՝ ասիկա մե՛ր գործն է, ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ եւ գործը բոլոր անոնց, որոնք պապրասաք եւ առանց այլեւայլի դիմագրաւելու մեր երկրի ազապագրման այսօրուան մարտահրաւէրը

Դիտեցէք լուսանկարը, որ հատորներու դառն պերճախօսութեամբ մեզի կ’ըսէ, թէ ով ենք մենք եւ ով է մեր թշնամին եւ ինչ է այն ուժը, որուն ձեռքերուն մէջ կը գտնուի մեր երկրին դեկը։ Հոս այլեւս նրբերանգներ չկան։ «Մեղմացուցիչ դէպք յանցանաց»ներ գոյութիւն չունին, որոնց ետին կարողանաք պահուրտիլ։ Թշնամին է, որ օր–ցերեկով կը ժպրհի ձեր արժանապատուութիւնը քուրջի վերածել եւ դուք ոչինչ ունիք ըսելու։

Թշնամիի խոշտանգումներու զոհը, այս պարագային, Արցախի Հանրապետութեան Մայր Եկեղեցին է, նոյնիքն Շուշիի Ս. Ամենափրկիչ տաճարը, աշխարհին ծանօթ որպէս Շուշուայ Ղազանչեցոյ… Ան գերեվարուած է, սրբապղծուած, անարգուած եւ թշնամիի ամէնօրեայ քմայքներուն եւ սատիզմին նշաւակ։

Թշնամին զայն խլեց առանց փամփուշտ մը իսկ վատնելու իր զինապահնստէն։ Շուշին եւ իր Սուրբ Ամենափրկիչը (եւ շատ ուրիշ հայրենական տարածքներ) պարզապէս տրուեցան թշնամիին Նոյեմբեր 9–ի Եռակողմանի Յայտարարութեամբ եւ Նիկոլ Փաշինեանի գաղտնի ստորագրութեամբ։ Տրուեցան բոլորովին ծածո՛ւկ՝ ՀՀ Նախագահն, ՀՀ Արտգործնախարարէն, ՀՀ Ազգային ժողովէն, ՀՀ դատական իշխանութիւնէն, Արցախի Հանրապետութեան Նախագահն եւ պետական օրգաններէն եւ ողջ հայ ժողովուրդէն։ Տրուեցան նե՛նգ անձնատուութեա՛մը եւ մէ՛կ անձի պատասխանատուութեամբ եւ բացէ ի բաց ոտնակոխ ընելով ՀՀ Սահմանադրութեան կողմէ ճշտուած վարչապետական պարտաւորութիւնները։ Յատկացնենք անմիջապէս, որ Նոյեմբեր 9–ի Եռակողմանի Յայտարարութիւնը շատ հեռու է միջ–պետական համաձայնագիր ըլլալէ։ Ան նենգաւոր գործարք մըն է Ալիւելի, Մոսկուայի եւ Նիկոլ Փաշինեանի միջեւ։ Եթէ մեր ժողովուրդը պիտի խօսի իր խղճով եւ արժանապատուութեամբ եւ մտածէ մեր անկախ պետականութեան դիրքերէն, մեր ժողովուրդը պիտի բացարձակապէս մերժէ Նոյեմբեր 9–ի այս լպիրջ թուղթը եւ դուրս չարտէ զայն ստորագրող վարչապետը մեր երկրի քաղաքական բեմէն եւ օրինական հետապնդման ենթարկէ զայն առանց պահ մը իսկ ղեղեւելու։

Այո, այսպէս պէտք էր եղած ըլլար առաջին օրն իսկ, բայց չեղաւ։ Փաստը այն է, որ Փաշինեան դուրս չէ դրուած մեր երկրի քաղաքական բեմէն։ Ան վերստին դրուած է իշխանութեան դիրքերուն վրայ։ Եւ այսօր մենք հարկադրուած ենք հաշուի նստելու մեր ազգային այս մեծ ողբերգութեան հետ։Հիմա հարց տանք մենք մեզի։ Ո՞վ է իսկական պատասխանատուն Շուշիի եւ Ղազանչեցոյ Եկեղեցւոյ գերեվարման ընդվզեցողներէ փաստին։ Ո՞վ է, որ իսկապէս թոյլ կու տայ այս հսկայ անարգանքը ուղղուած՝ մեր ինքնութեան։ Նիկո՞ղն է։ Մոսկուա՞ն է։ Արեւմո՞ւտքն է։ Իրա՞նն է։ Իսրայէ՞լն է։ Նիկոլի ջատագովական դաշտի կոյր գործիչնե՞րն են։ Թէ՞ մեր երկրի ապաքաղաքացինե՛րը՝ որոնք իրենց անողնայար կեցուածքով եւ անորակելի վարքագծով Նիկոլնե՛ր կը վերարտադրեն։ Թէ՞ մեր երկրի կոտորակուած ընդդիմութի՛ւնն է, որ չի կրնար միաւորուիլ եւ ոտնաքարչ արտաքսել այս օտարոտին մեր հաւաքական կեանքի հարթակէն։ Թէ՞ առհասարակ բոլոր անո՛նք՝ որոնք չեն կրնար կտրել գորդեան հանգոյցը եւ վճռականօրէն բանալ ճամբայ… Ո՞վ։

Նոյեմբեր 9–ի փաստաթուղթը – հակառակ իր ապօրինի կարգավիճակին – այնուամենայնիւ կը շարունակէ գործել իր ճակատագրական աւերը։ Ձերամբ Նիկոլի՛ ան թշնամիին յանձնեց մեր հայրենիքի կենսական տարածութիւնները եւ դեռ կը շարունակէ յանձնել՝ ամէն օր աւելի անպաշտպան եւ անպաշտպանելի դարձնելով մեր անկախ պետականութիւնը։ Հարց տուէք դուք ձեզի, թէ իսկապէս ի՞նչ բան է այս փաստաթուղթը, որ օրը– օրին կ’արագացնէ մեր ազգային գահալէժը մեզ ազգովին մղելով յանցաւոր անգործութեան։ Պատասխանը յստակ է։ Ան ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ թշնամիին կողմէ պարտագրուած միակողմանի պայմանագրութիւն մը։ Գործարք մը եւ գործիք մը միաժամանակ՝ որ մեր երկրի իշխանութեան իսկ ձեռքով վերջ կը դնէ մեր անկախ պետականութեան կենսական յենարաններուն եւ օր–ցերեկով կը գրէ մահապճիւղ մեր գոյութեան։

Եւ բարացուցական է այն աղաղակող իրողութիւնը, որ յիշեալ փաստաթուղթը նոյնիսկ չէ կրցած լուծել ռազմագերիներնու հարցը։ Ձէ կրցած՝ քանի որ այս փաստաթուղթը չէ ստեղծուած որեւէ հարց լուծելու հայկական կողմին համար։ Ան ստեղծուած է պարզա–

պէս առեւանգելու հայ անկախ պետականութիւնը եւ բռնի հայաթափման տանելու մեր հայրենիքի վերջին այս պատառիկը, որ դարերու ընդմէջէն պահպանուած է անդուլ պայքարներով եւ ծով արիւնով։ Նոյեմբեր 9–ի փաստաթուղթը ստեղծուած է մեզ վերածելու անարմատ սփիւռքի եւ անխարխիւ հաւաքականութեան՝ մեծապետութիւններու այս ովկիանոսին մէջ։ Ան ստեղծուած է միանգամընդմիշտ բնաջինջ ընելու մեր անկախութեան աշխարհաքաղաքական հողը։Նկատի առնելով վերոյիշեալը մենք կ’ըսենք՝ Նիկոլ Փաշինեանի կողմէ գլխաւորուած պարտութեան այս վարչակարգը չի կրնար ներկայանալ աշխարհին որպէս հայ անկախ պետականութեան հարազատ ձայնը։ Ան կապ չունի մեր ազգային գերագոյն շահերուն հետ։ Ան կապ չունի մեր ազգային ինքնութեան հետ։ Իր քաղաքական էութեամբն իսկ ան գործիքն է թշնամի ուժերուն՝ կարեւոր չէ, թէ ի՞նչ պիտի՞ «մեծամասնութիւն» ան հաւաքած ըլլայ վերջին արտահերթ ընտրութիւններու ընթացքին։ Չմոռնա՛լ՝ որ նման «մեծամասնութիւն» գոյացուցած էր նաեւ այն իսկ իշխանութիւնը, զոր մերժելով եւ որուն ոտնահետքերով ինք եկաւ իշխանութեան։ Այժմէն իսկ յստակ թող ըլլայ պարտութեան վարչակարգի ներկայացուցիչներուն։ Իրենց բիւզանդական «մեծամասնութիւն»–ները մեզ չեն տպաւորեր եւ ի վերջոյ պիտի չկրնան խաբել ՀՀ քաղաքացին։ Այդ «մեծամասնութիւն»ներով դուք միայն յաջողած էք անդամալուծել հայ պետականութեան օրէնսդիր գործընթացը եւ վերջ տուած՝ բազմակարծութեան կենսական ռեժիմին։ Դուք իրաւազրկած էք ոչ միայն մեր ժողովուրդը, այլեւ ձեր իսկ իշխանութիւնը եւ զայն վերածած տխմար բռնատիրութեան մը՝ որ կը կապէ միայն ձեր ձեռքերը։ Նոյեմբեր 9–ի փաստաթուղթով դուք մեր անկախ պետականութիւնն է, որ տարած էք հաւաքական ինքնասպանութեան, տարած էք գերեվարման եւ այսօր այդ Մեծ Ռազմագերին է, որ կը հեծէ թշնամիի լուծին տակ։ Հետեւաբար այսօր մեր գործն է չըջել գերեվարման այս եպրելի գործընթացը եւ անգամ մը եւս տէր կանգնիլ մեր խոշտանգուած ժողովուրդին։ Մեր գործն է տէր կանգնիլ մեր ազատութեան, մեր անկախութեան, մեր երկրի տարածքային ամբողջականութեան, մեր հոգեւոր եւ մշակութային ժառանգութեան, մեր պատմական յիշողութեան եւ մեր ազգային արժանապատուեան։ Ինչպէս միշտ՝ ասիկա մե՛ր գործն է, ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ եւ գործը բոլոր անոնց, որոնք պատրաստ են առանց այլեւայլի դիմագրաւելու մեր երկրի ազատագրման այսօրուան մարտահրաւէրը։ Եւ ոչ մէկ չինժու իշխանութիւն կրնայ կենալ մեր եւ մեր պատմական այս առաքելութեան միջեւ։

Հասկնալով հանդերձ մեր հասարակութեան կեանքը բզկտող գոյութենական երկուութիւնները, այնուամենայնիւ մենք կը հաւատանք, որ դասալքութիւնը այլընտրանք չի կրնար ըլլալ մեր ժողովուրդին համար։ Մի հաշուէք ասոր վրայ։ Մենք կը հաւատանք, որ մեր երկրի քաղաքացին անպայման պիտի ընտրէ զգաստութիւնը։ Պիտի ընտրէ քաղաքացիական քաջութիւնը։ Ան համակեցութեան պիտի չգայ Փաշինեանի պարտութեան վարչակարգին հետ։ Ան պիտի մերժէ պարտութիւնը։ Պիտի մերժէ Նոյեմբեր 9–ի եռակողմանի դաւը մէկդի հրելով բոլոր կասկածելի «խնամախօս»ները։ Մեր երկրի հարազատ ինքնութիւնը ներկայացնող քաղաքական ուժերը պիտի կանգնին ոտքի։ Պիտի վերախմբուին եւ հիմնովին պիտի մերժեն պարտութեան հետ ապրելու ձեր բոլշեւիկեան դաւանանքը։ Անոնք պիտի չյանձնեն մեր երկիրը։ Անոնք պիտի չսողան թշնամիին առջեւ։ Անոնք գործիք պիտի չդառնան մեծապետութեանց ձեռքին։ Անոնք պիտի մերժեն գերութիւնը։ Անոնք ետ պիտի բերեն այն ամէն ինչը, զոր դուք տուիք թշնամիին։ Այն ինչ, որ դուք տուիք թշնամիին, ձեր իսկ խոստովա–նութեամբ, ձեզի չէր պատկաներ։ Այդ բոլորը կը պատկանին մեզի եւ այդ բոլորը մենք ենք, որ ետ պիտի բերենք։ Թէկուզ գերմարդկային զոհողութիւններով, թէկուզ ժամանակի նոր ապառաժներ հալեցնելով, մենք քար առ քար պիտի հոյակերտենք այն երկիրը, ուր – թումանեանի անմահ բառերով – «ձգտում է մեր հոգին» եւ որուն արժանի են մեր զաւակներն ու թոռները այժմ եւ միշտ եւ յաւիտեան։ Կարմիր գիծերը քաշուած համարեցէք։ Կը կրկնե՛մ։ Կարմիր գիծերը քաշուած համարեցէք եւ չկասկածիք, որ Շուշիի մեր սգաւոր տաճարին զանգերը պիտի նորէն զօղանջեն երկրէ երկիր։

Կարօ Արմենեան

17 athletes represent Armenia in Tokyo Olympics

TOKYO—The 2020 Summer Olympics kicked off in Tokyo on July 23 with 17 athletes representing Armenia taking part. Swimmer Varsenik Manucharyan and boxer Hovhannes Bachkov were the flag bearers of Armenia at the opening ceremony, reported Armenia’s Public Radio.

President Armen Sarkissian attended the Olympics opening ceremony.

26 more POWs sentenced by sham Azerbaijani Court

BAKOU—A court in Baku on July 23 sentenced another 13 Armenian prisoners of war to six years in prison after staging sham trials. This follows the sentencing of 13 other POWs the previous day, bringing the total to 26 captives in two days.

The courts also ruled that upon serving the sentence, the POWs will be immediately returned—or extradited—to Armenia.

The presiding judge made

the ruling bringing various charges, including terrorism, illegal transfer and sale of arms as well as being part of “armed groups.”

Earlier this month 14 other POWs were sentenced to serve four years to six months in prison.

The harshest sentence so far handed down by an Azerbaijani court in its fraudulent trials was to Lebanese-Armenian Vicken Euljekjian, who was given a 20-year sentence.

Ex-Defence Minister to lead Armenia Alliance in Parliament

YEREVAN—The Armenia Alliance, led by former president Robert Kocharian, on July 22 chose Armenia’s former defence minister, Colonel-General Seyran Ohanyan to lead its bloc in parliament. Armenian Revolutionary Federation Supreme Council of Armenia member Artsvik Minasyan will be the bloc’s secretary.

After announcing that it would take up its 29 mandates in parliament, the Armenia Alliance bloc held a meeting, chaired by Kocharian. During the meet-

ing, the alliance’s strategy and approach were discussed and the leadership of the bloc was elected.

Armenia’s Central Electoral Commission published the names of the new members of parliament who will be part of the parliament when it convenes on August 2.

The ruling Civil Contract party, headed by acting prime minister Nikol Pashinyan will be represented by 71 members, while former President Serzh Sarkisian’s “I Have Honour” Alliance will be have seven seats.

Armenia’s Constitutional Court upholds June 20 election results

YEREVAN—Armenia’s Constitutional Court on July 17 rejected opposition demands to overturn official results of the June 20 parliamentary elections.

The court upheld the vote results in response to separate appeals lodged by opposition alliances led by former Presidents Robert Kocharian and Serzh Sarkisian and two smaller groups that failed to win any seats in the Armenian parliament.

The four opposition forces alleged serious irregularities which seriously affected the election outcome. In particular, they accused Pashinyan of abusing his government levers, bullying opposition activists and resorting to “hate speech” during the election campaign and forcing military and security personnel to vote for his ruling Civil Contract party.

Opposition representatives presented what they called evidence of the alleged violations during court hearings on the appeals that began on July 9 and

lasted for six days.

The Constitutional Court also questioned representatives of the Central Election Commission, the Armenian government and Pashinyan’s Civil Contract party. They all dismissed the opposition allegations as baseless.

Pashinyan and his political allies maintain that the snap elections were free and fair, pointing to their largely positive assessment by European election observers. The latter concluded in a preliminary report that the vote was “competitive and generally very well-managed.”

The court’s refusal to cancel the vote results was announced by its chairman, Arman Dilanyan. He said the ruling will be fully publicized in due course.

It was not immediately clear whether all of the court’s nine judges agreed with the decision. Five of them, including Dilanyan, took the bench after the 2018 “velvet revolution” that brought

Continued on page E2

Joint ANC-International and ANCC delegation meet Special Envoy Stéphane Dion

OTTAWA — On July 22, a joint delegation of the Armenian National Committee International Council (ANC-International) and the Armenian National Committee of Canada (ANCC), headed by ANC International Chair, Hagop Der Khatchadourian and ANCC Chairman, Mher Karakachian, met with HE Stéphane Dion, Canada’s recently appointed Special Envoy to Armenia.

ANCC Co-Presidents, Hrag Tarakjian and Shahen Mirakian and Executive Director Sevag Belian were a part of the delegation that engaged in a friendly and constructive discussion with the ambassador and officials from Global Affairs Canada about the newly announced mission and the priorities and expectations of the Armenian-Canadian community.

The ANCC delegation welcomed Mr. Dion’s appointment as an important step in securing further Canadian engagement in Armenia, noting the wide-ranging issues that are currently faced by Yerevan and the pivotal role that Canada should play in helping the Armenian people tackle these challenges.

Despite the fact that Mr. Dion’s mission primarily focuses on strengthening Armenian democracy, the ANCC delegates emphasized the

paramount importance of addressing Armenia’s various security challenges posed by the hostile regimes of Turkey and Azerbaijan which stand as the largest barriers to achieving internal stability and full democracy in Armenia. It was underlined that without helping Yerevan address its national security challenges, it will be virtually impossible to bring about positive change in the way Armenia is governed.

The ANCC delegation emphasized the vital need for Canada to upgrade its diplomatic representation in Armenia by establishing an embassy in Yerevan and increases the economic and political cooperation between the two countries via direct investments and aid.

